ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՋՆԻՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՋՈՒՂԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ջուղան կամ Ջուլֆան, որը եղել է քաղաք պատմական Հայաստանի Երնջակ գավառում,այժմ քաղաք է Ադրբեջանի Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունում, Ջուլֆայի շրջանի վարչական կենտրոնն է: Այն գոյատեւել է անընդմեջ մինչեւ 1848թ.: Ջուղա քաղաքը ըստ ավանդույթի հիմնադրել է հայոց Տիգրան Երվանդյան թագավորը: Հայ մատենագրության մեջ Ջուղայի մասին հնագույն տեղեկությունները վերաբերում են մ.թ.ա. առաջին դարին: Մովսես Խորենացին, նկարագրելով Տիգրան Երկրորդի (գահակալության տարիները՝ մ.թ.ա. 95-55 թթ.) քաջագործությունները, նշում է, որ Ազդահակին հաղթելուց հետո նրա առաջին կնոջը՝ Անույշին «եւ շատ աղջիկներ Ազդահակի սերունդից՝ պատանիներով եւ գերիների բազմությամբ հանդերձ, ավելի քան մի բյուր մարդ Տիգրանը բնակեցնում էր Մեծ լեռան արեւելյան կողմը մինչեւ Գողթնի սահմանները. սրանք են Տամբատ, Ոսկիողա, Դաժգույնք եւ գետեզրյա ուրիշ դաստակերտներ, որոնցից մեկն է Վարանջունիք, մինչեւ Նախճավան ամրոցի դեմուդեմը: Նրանց է թողնում նաեւ երեք ավաններ՝ Խրամ, Ջուղա եւ Խորշակունիք»[1]:

Ջուղան այնուհետեւ հիշատակվում է Է դ.՝ Հայաստան ներխուժած արաբական արշավանքների դեպքերի առթիվ: Այդ մասին Ղեւոնդ պատմիչը նշում է, որ արաբները, հարձակվելով Հայոց Աշխարհի վրա, ավերում են Գողթնը եւ նրա շրջակա գավառները: Այնուհետեւ արաբները 688 թ. կրկին հարձակվում են Հայաստանի վրա եւ ավերում Խրամ, Ջուղա, Խորշակունիք քաղաքները:

Ջուղան այնուհետեւ հիշատակվում է 10-րդ դարում, երբ 962 թ. Խրամ քաղաքի ավերումից հետո Ջուղա են տեղափոխել Ս. Կարապետի մասունքները: Առաքել Դավրիժեցին այս փաստի մասին նշում է, որ Ջուղայի բռնագաղթից հետո մի մահմեդական Ջուղայի Ամենասուրբ Երրորդություն կամ Վերին Կաթան անվանվող եկեղեցու ավագ խորանից գտած արկղիկի մեջ հայտնաբերել է սուրբ մասունքներ եւ մի կտոր մագաղաթ, որոնք որոշ ժամանակ անց հանձնվել են Ջուղայից ոչ այնքան հեռու գտնվող հռչակավոր Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի եպիսկոպոս Շմավոնին: Այդ մագաղաթում գրված էր.«Այս է մասն նշխարաց սրբոյն Յովհաննու Կարապետի, զոր Գրիգոր Լուսաւորիչ երեր ի Հայս, եւ եդ ի քաղաքն Խրամ, իսկ ի յաւերման Խրամ քաղաքին ի ՆԻԱ(972) թուին Հայոց բերին ի Ջուղայն»[2]:

---

1 **Մովսես Խորենացի**, Հայոց Պատմություն, թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները ակադեմիկոս Մալխասյանի, Եր., 1961, էջ 132-133:

2 « Պատմություն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ », Վաղ-պապ, 1896, էջ 524:

Պատմական Ջուղա քաղաքը տարածված է եղել այժմյան Նախիջեւանի ԻՍՍՀ Ջուլֆայի շրջանի Ջուղա գյուղի մերձակայքում՝ Արաքս գետի ձախ ափին, ավելի քան 2 կմ. երկարությամբ՝ արեւելքից դեպի արեւմուտք, Արաքսից մինչեւ մոտակա լեռնափեշերը՝ 400-500 մ լայնությամբ: Ապառաժոտ լեռնաշղթաների արանքում հիմնադրված Ջուղայի թաղամասերն ընդգրկել են նաեւ Արաքսի աջափնյա (այժմ իրանական) հարթությունները, ուր այժմ էլ նկատվում են քաղաքապատկան շինությունների՝ կամրջի, քարավանատան, եկեղեցու, գերեզմանատան եւ այլ կառույցների ավերակներն ու հետքերը: Արաքսամերձ այս վայրը բավական խորն ու երկար, նեղ կիրճ է, որին ջուղայեցիները կոչել են Ծակուտա ձոր, Ծակուտ: Երկու կողմերից Արաքսը եզերող Մաղարդայի եւ Ջուղայի լեռնաշղթաներն այստեղ ավելի են իրար մոտեցել, եւ նրանց քարքարոտ ու մերկ փեշերի արանքով հոսող Արաքսը տեղ-տեղ փրփրոտ ու արագընթաց է,աղմկոտ, ափերը ծեծող, իսկ տեղ-տեղ հեզասահ է ու սիգաճեմ: Ծակուտա կիրճից քիչ արեւմուտք՝ մյուս ափից, Արաքսին է միախառնվում պատմական Կարմիր կամ Տղմուտ գետը:

Դատելով Ջուղայի հնագիտական տարածքից եւ պատմական աղբյուրների վկայություններից՝ քաղաքը կազմված է եղել ավելի քան 10 մեծ թաղամասերից, բնակեցված միայն հայերով եւ ունեցել է յոթ նշանավոր եկեղեցիներ ու մի քանի այլ մատուռներ ու սրբավայրեր, աշխարհիկ մի շարք կառույցներ: Մինչեւ Ջուղայի ավերումն ու բռնի գաղթեցումը այդտեղով անցած եւրոպացի մի շարք ճանապարհորդների հաղորդած տեղեկություններով ԺԶ դ. կեսերից հետո քաղաքն ունեցել է 2-4 հազարի հասնող տներ՝ 15-20 հազարից մինչեւ 40 հազար հայկական բնակչությամբ[3]: Չնայած տեղանքի ոչ այնքան նպաստավոր պայմաններին, քաղաքաշինությունն ընթացել է որոշակի սկզբունքներով: Քարեշեն եւ աղյուսաշեն միահարկ եւ երկհարկ տները ներսից ծեփված եւ մեծ մասամբ որմնանկարված են եղել: Գլխավոր եւ միջթաղային փողոցները, որոնք մեծ մասամբ սալարկված ու խճաքարով փռփանված են եղել, ունեցել են 1.5-2 մ միջին լայնություն: Ինչպես բնակելի տների մի մասը, այնպես էլ Ջուղայի հուշարձանները արծվի բների նման ծվարել են լեռների բարձունքներին կամ փեշերին:

Ընդհուպ մինչեւ 1604 թ. Ջուղան պահպանում էր իր բացառիկ հայկական ինքնությունը: Քաղաքի ծաղկման շրջանը ընկանում է ԺԶ դարին, երբ այն դարձել էր միջազգային առեւտրի կենտրոն: Այդ ժամանակ քաղաքում կար 7 եկեղեցի եւ երեք հազար տուն: 1603 թ. բնակիչները ապշեցրեցին Աբաս Ա Շահին իրենց տների ճոխությամբ, երբ նա վերցրեց այդ տարածքները թուրքերից: Աբաս Ա հրամայում է այդտեղի բոլոր հայերին տեղափոխել Պարսկաստանի խորքերը, քանի որ նա մտածում էր, որ չի կարողանա պաշտպանել նոր գրաված Արեւելյան Հայաստանի հողերը: Ջուղայի ողջ բնակչությունը արտաբնակեցված է եղել, իսկ քաղաքը՝ այրված, որից հետո քաղաքը մտել է անկման դարաշրջան: 1812 թ. անգլիացի մի ճանապարհորդ նաշում է, որ ավերակներին մնացել էին միայն 45 հայ ընտանիք:

Ջուղայի հուշարձանների ուսումնասիրության գործում մեծ աշխատանք է կատարել հայ երախտավորներից մեկը՝ Արամ Վրույրը: 1912 թ. Ջուղայում ուսումնասիրություններ կատարելուց հետո, իր տպավորությունների մասին գրել է Ն. Մառին, որտեղ ասում

3 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 18, էջ 410-413:

է.«Աչափ հեռաքրքիր է Ջուղան, մի փոքրիկ Անի, կարծեք ավելի ճոխ պահեստ 14-15 դարերի իրեղենների... Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այդ տեղի վրա, մանավանդ, որ համարյա ամեն տարի տնավարի պեղումներ են կատարվում: Գտնված ամանները ամբողջ կամ զարդարված անհաշիվ են»[4]: Հետագայում Ա. Վրույրը 1915 թ. սեպտեմբերին ձեռնամուխ է լինում Ջուղայի գերեզմանատան խաչքարերի լուսանկարման աշխատանքներին, ինչպես նաև բռնագաղթի ու ավերման ենթարկված քաղաքի մասին մնացած ավանդույթների հավաքմանը:

Արամ Վրույրը, իր Արտաշես որդու հետ միասին, Ջուղայի գերեզմանատանը լուսանկարեց շուրջ 100 ընտր խաչքար եւ 1915 թ. իր տպավորություններն ամփոփեց «Ջուղա» հոդվածում. «Ես շատ էի ցանկանում, որ Ջուղայի մասին ընդհանրապես եւ նրա խաչքարերի մասին մասնավորապես ավելի ձեռնհաս անձ հանձն առներ գրել մի ամփոփ տեսություն, բայց հակառակ իմ արած դիմումներին մինչեւ օրս այդպիսի մի գործ ոչ ոք չձեռնարկեց, իսկ ինձ համար շատ ցանկալի էր, որ մի ժամանակ իր հարստությամբ անչափ հռչակ հանած այդ քաղաքը, ինչպես հորջորջում են իրենք՝ ջուղայեցիք, չմնար մեն մենակ, իր բազմաթիվ գեղաքանդակ խաչքարերով, այլ գրի առնվեին այն հատուկտոր ավանդույթները, որ ցրված են տեղացվոց մեջ, որոնք դարեր հոլովվելով նվազել եւ հազիվ մի քանի առասպելանման անցքեր պատմվում են մեր օրերը»[5]:

Ջուղան հայոց պատմության մեջ հայտնի է իր միջնադարյան մի շարք պատմական ու ճարտարապետական հուշարձաններով, հազարավոր գեղաքանդակ ու զարմանահրաշ խաչքարերով, հոյակապ կամրջով, բերդով, մի շարք քարավանատներով ու վաճառատներով, քաղաքային շուկայով ու բաղնիքով, եկեղեցիներով ու այլեւայլ հուշարձաններով, որոնք այժմ մեզ են հասել մեծ մասամբ հիմնահատակ ավերված եւ մասամբ էլ կանգուն ու կիսակործան վիճակով: Ժամանակին այստեղ գործում էին Ամենափրկիչ վանքը, Ս. Գեորգ վանքը, Ս. Մինաս, Ս. Հովհաննես, Ս. Հակոբ, Ամենասուրբ Երրորդություն կամ Վերին Կաթան, Անդրեորդի, Պամբլոզի ժամ եւ այլ եկեղեցիներ, որոնցից մի քանիսն են մնում, այն էլ կիսակործան վիճակով: Ժամանակի եւ պատմական անցյալի բերումով Ջուղա քաղաքից այժմ շատ քիչ բան է մնացել:

Ս. Ամենափրկիչ վանք. - Ջուղայի գերեզմանատնից դեպի հյուսիս-արեւմուտք մի բավականին խոր ձորակ կա, որը մշտական քամիների պատճառով ջուղայեցիները կոչում էին Քամու ձոր: Այդ ձորի պռնկին է կառուցված Ջուղայի հռչակավոր Ամենափրկիչ վանքը: Վանքի հարավային մասում՝ Մաղարդայի լեռնաշղթայի փեշերով, հոսում է Արաքս գետը: Արեւելքում՝ վանքի լեռան ստորոտում, Ջուղայի գերեզմանատունն ու քաղաքի ավերակներն են, իսկ հյուսիսից եւ արեւմուտքից լերկ եւ վարդագույն լեռներն են: Ամենափրկիչ վանքի համալիրը բաղկացած է փոքրածավալ եկեղեցուց, գավթից, սեղանատնից, միահարկ եւ երկհարկ օժանդակ, արտաքրական եւ այլ շինություններից, որոնք պարսպապատված են: Համալիրի հարավ-արեւելյան անկյունում գտնվող եկեղեցին ավագ աբսիդով եւ զույգ ավանդատներով, արեւմտյան ճակատի մուտքով կենտրոնագմբեթ հուշարձան է:

Կառուցված է ճեղքված, կիսամշակ եւ մասամբ սրբատաշ քարերով եւ կրաշաղախով:

---

4 **Ռ. Փաշայան**, Արամ Վրույրի անտիպ նամակներ, « Գարուն», 1975, թ. 2, էջ 75-76:

5 «Պատմ-բանասիրական Հանդես», 1967, թ. 2, էջ 170:

Ներքին փարածքը սվաղված է եւ սպիտակացված: Բավական մեծ ու կլոր գմբեթը ծածկված է բրգաձեւ վեղարով: Եկեղեցին հիմնականում զուրկ է ճարտարապետական հարդարանքից: Նրա միապաղաղ տեսքին որոշ չափով շունչ են հաղորդում մուտքի շուրջը եւ որմերի այլ մասերում տեղադրված մի քանի արձանագիր խաչքարերը: Նկատի ունենալով հուշարձանի ճարտարապետական ու հորինվածքային առանձնահատկությունները՝ պետք է եզրակացնել, որ Ամենափրկիչ վանքը կառուցվել է ոչ ուշ քան Թ-Ժ դդ.: Ամենափրկիչ վանքի հարավային մասում գտնվում է վանքի գերեզմանատունը, ուր ամփոփված են միաբանների եւ եպիսկոպոսների աճյունները: Այս գերեզմանատան խաչքարերի մեծ մասը վերաբերում են ԺԵ-ԺԶ դդ. եւ ունեն ուշագրավ պատկերաքանդակներ ու զարդաձեւեր, որոնց մեծ մասը փապալված են կամ կործանված, կամ էլ թաղված հողի տակ[6]:

Քարանձավները. - Քամու ձորի եւ Ջուղայի շրջակա լեռների ծերպերում կան մի քանի խորշ ու խորշակներ, բնական քարայրներ ու անձավներ, որոնցից ամենանշանավորը «ճգնավորի» եւ «կրեկճատուն» քարանձավներն են: Վերջիններս գտնվում են Ամենափրկիչ վանքից հյուսիս՝ Քամու ձորում: Մոտավորապես մ.թ.ա. Բ-Ա հազարամյակին վերագրվող այս քարանձավները հնում օգտագործվել են որպես բնակատեղեր, իսկ մինչեւ Ջուղայի տեղահանությունը՝ ապահով թաքստոցներ: «Կրեկճատուն» քարանձավը հնում օգտագործվել է որպես կիր մշակելու արհեստանոց, որտեղից էլ ստացել է իր անունը:

Քաղաքային բաղնիքը.- Այս հուշարձանի ավերակները այժմ չեն էլ երեւում. գտնվել է քաղաքային գերեզմանատան եւ արաքսամերձ փարածքում: Այն հիմնահատակ ավերվել է երկաթգծի շինությունների ժամանակ: Հուշարձանի նկարագիրը թողել է Քաջբերունին: Ըստ այդմ՝ «գերեզմանատան եւ Արաքսի արանքում ճանապարհորդը կտեսնի մի հոյակապ, գմբեթաձեւ, կրաշաղախ բաղնիք, որի ընդարձակ նախասրահը երեք դռներով բացվում է դեպի Արաքսը: Նախասենյակից միակ կամարաձեւ դռնով դուք մտնում եք երկայն, աջ եւ ձախ կողմը ձգվող կամարակապ շեմը, որի ծայրերում կան փոքրիկ սենյակներ, երեւի թե հանվելու կամ հագնվելու առանձնատներն են: Շեմից մտնում եք լողարանի կամարակապ մեծ սենյակը, որի գմբեթի մի մասը թեեւ քանդված է, բայց մեջտեղի լուսամուտները դեռեւս ամբողջ են: Լողարանի յուրաքանչյուր անկյունում կա փոքրիկ կամարակապ սենյակ, իսկ երեւի պատի մյուս կողմում, կամարակապ շինության մեջ երեւում է ջրի պահարանը, հնոցը եւ այլն»[7]: Բաղնիքը հավանաբար կառուցված է եղել ԺԶ դ., քանի որ ավանդությունն այն վերագրում է Ջուղայի քաղաքապետ խոջա Խաչիկին:

Գլխավոր քարավանատուն.- Քաղաքի գլխավոր քարավանատունը համարվող այս հուշարձանի ավերակները գտնվում են Արաքսի եւ երկաթգծի միջեւ գտնվող հարթ վայրում: Շինության հորինվածքը կրկնում է փակ առեւտրական շենքերի՝ շուկաների, հատակագիծը: Այն ուղղանկյուն հատակագծով շինություն է եւ զբաղեցնում է բավականին ընդարձակ փարածություն (ունի 37 մ երկարություն), որի մեծ մասը փլատակների է վերածված: Թաղակիր ծածկերով իրականացված այդ շինությունը կառուցվել է կիսամշակ քարերով, աղյուսով եւ կրաշաղախով, եւ ներսից գաջով սվաղվել է: Ներսում՝ պատերին կից, կառուցված են եղել ճանապարհորդների, անասունների եւ ապրանքների համար բազմաթիվ մեծ ու փոքր սեն-

6 Տե՛ս **Արգամ Այվազյան**, Ջուղա, Եր. 1984, էջ29:

7 **Քաջբերունի**, ճանապարհորդական նկատողություններ, «Փորձ», 1877-78, թ. 2, Թիֆլիս, էջ 354:

յակներ: Ամենայն հավանականությամբ այս քարավանատունը կառուցված է եղել ԺԲ-ԺԳ: Ավանդությունն այս հուշարձանի կառուցումը վերագրում է քաղաքապետ խոջա Խաչիկին[8]:

Կամուրջը.- Արաքսի գետի ափին կառուցված այս գեղեցիկ եւ հոյակապ կամրջի ավերակների մնացորդները մինչեւ օրս էլ մնում են պարսկական ափին: Այն գտնվում է բնակատեղիից արեւելք՝ Երնջակ գետի Արաքսին միախառնվելու հատվածում: Առեւտրական հույժ կարեւոր այս կամուրջը կառուցվել է մեծ խնամքով, սրբատաշ քարերով ու կրաշաղախով: Կամարների բացվածքներն ունեցել են մոտ 37 մ թռիչք եւ 3 մ լայնություն: Պատմական աղբյուրների վկայությամբ՝ Ջուղայի այս հռչակավոր կամուրջը, որը կառուցված է եղել դեռեւս վաղ միջնադարում «...կանգուն է եղել մինչեւ 1400 կամ 1500 թթ., քանի որ Ջուղայի գեղահանության ժամանակ այն ավերված էր: 1655թ. Տավերնիե, 1673 թ. Շարդեն եւ 1700 թ. Տուրնֆոր ճանապարհորդները անցնելով Ջուղայով նշում են, որ կամուրջը ավերակ է եղել[9]:

Ջուղայի կամ Դարվազրի բերդը.- Գտնվում է քաղաքի արեւելյան կողմում՝ Արաքսից դեպի մոտակա լեռնաշղթան ձգվող լեռան վրա, անմատչելի վայրում: Անմատչելի եւ բարձր պարիսպներով կառուցված այս բերդը դարեր շարունակ անվանվել է Ջուղայի կամ Դարվազրի բերդ: Վերջին անավանումը ստացել է քաղաքի գլխավոր մուտքի բարձր ու աշտարակավոր դարպասի պատճառով: ԺԱ-ԺԲ դդ. կառուցված այս բերդի մասին պատմական աղբյուրները շատ կցկտուր են. այն կառուցված է հիմնականում ճեղքված եւ կիսամշակ քարերով: Այժմ բերդապարիսպների եւ աշտարակների մեծ մասը ավերված է:

Պամբլոգի ժամ կամ Տավարածի (Նովվի) եկեղեցի.- Այս եկեղեցին գտնվում է քաղաքի գլխավոր քարավանատնից մոտ 300 մ հյուսիս-արեւմուտք: Եկեղեցին փոքր չափի, ներսից խաչաձեւ, իսկ դրսից քառակուսուն մոտ հատակագծով, միակ մուտքով կենտրոնագմբեթ հուշարձան է: Կառուցված է տեղական կարմրերանգ քարերով եւ ուղղակի ձուլվում է շրջակա լեռներին: Շինությունում առկա մի

շարք խաչքարերի վիմագրություններից երևալով կարելի է ենթադրել, որ այն վերանորոգվել է ԺԶ դ.: Այժմ եկեղեցու քարերի, խաչքարերի, ծածկի սալերի եւ այլ մասերի քարերի մի մասը թափված են, կոտրատված: Եկեղեցին գրեթե բոլոր կողմերից շրջափակված է ԺԶ-ԺԷ դդ. գերեզմանաքարերով եւ խաչքարերով, որոնց մեծ մասը կոտրատված է, արձանագրությունները՝ կեղծված[10]:

Սուրբ Աստվածածին եկեղեցին.-Հիմնադրված է քաղաքի արեւելյան կողմում, մի բարձր բլրանման ապառաժի վրա: Եկեղեցին հատակագծով ուղղանկյուն, արեւելյան աբիսոդով եւ զույգ ավանդատներով հուշարձան է: Այն հիմանակնում շարված է ճեղքված քարերով եւ ներսից ծեփապատ է: Սուրբ Աստվածածին եկեղեցին, որի նախկին շինությունը հիմնված է եղել ԺԲ-ԺԳ դդ., վերանորոգվել է ԺԶ դ. վերջին: Եկեղեցու բոլոր կողմերում դրված խաչքարերը տեղահան են արված: Եկեղեցին չորս կողմերից շրջափակված է եղել ժամանակակից եւ ամուր պարսպով, որն էլ նրան փոքրիկ բերդի տեսք է հաղորդում: Եկեղեցուց ոչ այնքան հեռու՝ արեւմտյան լանջի վրա, կա շուրջ 60 խաչքար:

Դաշտ գյուղի հեպքերը.- Գտնվում է Ջուղայի 1,5 կմ արեւելք՝ Արաքսի ափին, կամր-

8 Տե՛ս **Արգամ Այվազյան**, նշվ. աշխ. էջ 30:

9 **Ն. Առաքելյան**, Պարսկաստանի հայերը, նրանց անցյալը, ներկան ու ապագան, մաս Ա, Վիեննա. 1911, էջ 35-36:

10 Տե՛ս **Ա. Այվազյան**, նշվ. աշխ. էջ 32:

ջի մոտ, հարթ վայրում: Միջին մեծության այս գյուղը, տափարակ վայրում կառուցված լինելու պատճառով, ստացել է Դաշտ անվանումը, Դաշտի գյուղ, որի բնակչությունը եւս 1605 թ. բռնագաղթի ենթարկվեց: Դաշտի տարածքը կանաչազարդ եւ վարդերով պատված լինելու պատճառով ստացել է նաեւ Վարդուտ, Վարդուտի գյուղ անվանումները: Այս անվանումն էլ ԺԹ դ. վերջերին թարգմանվելով դարձել է Գյուլիստան: Դատմական այս գյուղը հիմնովին ավերված է:

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ.- Քաղաքային այս գերեզմանատունը, որը Ջուղայից մնացած ամենակարեւոր ու արժեքավոր հուշարձանախումբն էր, խաչքարերի մի կիսավեր անտառ էր: Հուշարձանախումբ, որն իր ընդարձակությամբ, բազմազանությամբ եւ բազմաթիվ խաչքարերի կատարողական արվեստով նույնիսկ միակն էր ամբողջ աշխարհում: Այն պատմական ու ճարտարապետական, քանդակագործական արվեստի մի իսկական հիասքանչ թանգարան էր: Այդ խաչքարերի, խոյաձեւ տապանաքարերի տակ են հանգչում Ջուղա քաղաքը, նրա փառքն ու հոչակն արարած ջուղայեցիների աճյունները:

Գերեզմանատունը տարածված էր քաղաքի արեւմտյան կողմում եւ գրավում էր ավելի քան 600 քմ տարածք: Գերեզմանատան խաչքարերն ու տապանաքարերը մոտակա լեռնալանջերի փլուզումներից եւ հեղեղումներից պաշտպանելու նպատակով կառուցվել են բարձր պատնեշ-պարիսպներ:

Ջուղայում սովորաբար խաչքարերը առանց պատվանդանների էին եւ անմիջապես կանգնեցված հողի մեջ (գերեզմանատներում որպես տապանաքար): Բոլոր խաչքարերը, որոնք վարդագույն, դեղներանգ քարերից են կտրված, անխտիր համրյա վերից վար ունեն հավասար լայնություններ եւ 2 մ միջին բարձրություն, որն էլ խաչքարերին հաղորդում է պատմական Հայաստանի տարածքում ուրարտական եւ եկուրարտական ժամանակաշրջանի քառակող ու բազմակող կոթողների տպավորություն: Խաչքարերը քանդակագործված են թեմատիկ զարդանախշերով. Քրիստոսի եւ ավետարանիչների, Աստվածամոր եւ Քրիստոսի, սֆինքսների, Գողգոթա- զիկկուրատի եռաստիճան պատկերներով, պճնանքի աստիճանի հասցրած սերմնահատիկ-շրջաքանդակի եւ այլ կոմպոզիցիոն ու բազմազան բարձրաքանդակներ: Իսկ խաչքարերի ստորին մասում սովորաբար քանդակված են արձանագրություններ, ազատության եւ արդրության սատար Ս. Գեորգի հեծյալ բարձրաքանդակը, կամ մահացածի պատկերաքանդակը: Ջուղայի գերեզմանատան առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ խաչքարերի հետ համատեղ տարածված են նաեւ բազմաթիվ մեծ ու փոքր, գեղեցիկ ու բազմաբնույթ կենցաղային քանդակներով պատված խոյաձեւ տապանաքարեր: Ջուղայեցի տաղանդավոր քարգործները, որոնցից, ցավոք, հայտնի են միայն մի քանիսը՝ երկու Գրիգորները, Իսրայելը եւ Հայրապետը, ԺԶ-ԺԷ դդ. քանդակած ավանդական խաչքարերի հորինվածքի մեջ մտցրել են որոշ փոփոխություններ՝ դրանով իսկ իրենց ստեղծածին տալով մասնավոր կնիք[11]: Ջուղայի խաչքարերը մեծ տեղ ունեն ոչ միայն հայկական, այլեւ համաշխարհային քանդակագործական արվեստում եւ եզրափակում են հայկական մենարվեստի շնորհը համարվող խաչքարերի զարգացման պատմական ընթացքը: 1914 թ. Գողթնում շրջագայելիս մեծատաղանդ նկարիչ Մ. Սարյանը գերեզմանատների մասին գրում է. «Ջուլֆայում նայեցինք Ջուղայի շքեղ խաչքարերը: Խաչքարերի

11 Տե՛ս **Ա. Այվազյան**, նշվ. աշխ. էջ 38:

այդ անտառի միջով անցնում էր երկաթուղին... Խաչքարերն ինձ ապշեցրին իրենց անկրկնելի գեղարվեստական արժեքով, մոտիվների զարմանահրաշ բազմազանությամբ ու ռիթմով: Միաժամանակ ցնցված էի տեսնելով, որ նրանց մի մասը ոչնչացվել է երկաթուղին անցկացնելու ժամանակ»[12]: Արամ Վրույրը այս գերեզմանների մասին ասում է. « Տեսարանն որքան խորհրդավոր է այդ խորին քարացած լռության մեջ: Մի քանի դարեր կյանք ունեցող հազարավոր կճյա ուրվականները, շարքերով կանգնած, կարծես պատրաստված են արշավանք գործելու. ճակատամարտն արդեն տեղի է ունեցել կարծես, որովհետև այդ հսկաներից որքաններն են աջ ու ձախ ընկած անկարգ: Նրանց շարքերը ձգվում են շատ երկար[13]: Իսկ եւրոպացի ճանապարհորդ-հնագետ Ռորերտ Կեր Փորտրերը ԺԹ դարի սկզբներին Ջուղայում լինելուց հետո նշել է.« Ես չափազանցրած չեմ լինի, եթե ասեմ, որ հազարավոր գերեզմանաքարեր աչքի էին ընկնում հայկական հին ցեղի այս հանգստարանում: Հիրավի, արեւելքի այս մասնավոր հողամասում զանազան հիշողություններ, որ ներկայանում են մտքին, հարատեւորեն թելադրում են այն գաղափարը, թե մարդ քայլում է գերեզմանոցից...»[14]:

Ջուղայի այս քաղաքային գերեզմանատունը մեզ հասած ամենամեծ հայկական գերեզմանատունն է: Ջուղայի տեղահանությունից հետո՝ 1648թ. ճանապարհորդ Ալեքսանդր Ռոդեսը անցնելով Ջուղայով, արձանագրել է, որ այնտեղ կանգուն է եղել շուրջ 10 հազար լավ պահպանված խաչքարեր[15]: 1903-04 թթ. երկաթգծի անցկացնելուց հետո, երբ հիմանահատակ ավերվել են բազմաթիվ խաչքարեր, գերեզմանատանը եղել է շուրջ 5 հազար կանգուն մնացած խաչքար: Խաչքարերից բացի այս գերեզմանատանը պահպանվել էին նաեւ հազարից ավելի խոյաձեւ, ինչպես նաեւ երկթեք կազմությամբ քանդակազարդ տապանաքարեր:

Ջուղայի գերեզմանատան խաչքարերի ավելի մեծ կորուստը տեղի է ունեցել ԺԹ դ. վերջերին եւ մեր դարի առաջին տասնամյակներում, որի ընթացքում Ջուղայի այլեւայլ հուշարձանների ու ավերակների հետ միասին ոչնչացել են գերեզմանատան 5-6 հազարի հասնող խաչքարեր: Արդեն 1998 թ. խաչքարերի թիվը հասնում էր 2700: 2003 թ. Ադրբեջանը վերսկսում է խաչքարերի ոչնչացումը: Նույնիսկ 1998-02 թթ. ավերածություններից հետո մնացել էր 2000 խաչքար: Ականատեսները, նկրագրելով խաչքարերի նոր ոչնչացումը, բնութագրում են այն որպես լավ կազմավորված գործույթ:

1998 թ. Ադրբեջանը ժխտել է խաչքարերի ոչնչացման մեղադրանքները Հայաստանի կողմից՝ չնայելով առկա բազմաթիվ ապացույցներին: Մասնավորապես Արթուր Պետրոսյանը՝ Հայկական ճարտարապետությունը Իրանում կազմակերպության անդամ, առաջինն է նկարել հուշարձանների ոչնչացումը[16]:

Շարունակելով ակներեւ ժխտման քաղաքականությունը՝ Ադրբեջանի կառավարությունը ուղիղ չպատասխանելով հայերի մեղադրանքներին, հայտարարել է, որ «վանդալությունը բնորոշ չէ ադրբեջանցիներին»:

Ի պատասխան միջազգային հանրության մեղադրանքներին՝ Ադրբեջանը հայտարա-

12 **Մ. Մարյան**, Գրառումներ իմ կյանքից, գիրք 1, Եր., 1966, էջ 140:
13 **Ա. Վրույր**, նշվ. աշխ., էջ 173:
14 **Ն. Նակոբյան**, Ուղեգրություններ, հատոր Ջ (1800-1820), Եր. 1934, էջ 198:
15 Տե՛ս **Ղ. Ալիշան,** նշվ. աշխ., էջ 173:
16 wikipedia.org/wiki/Julfa,_Azerbaijan_(city)

բել է, որ հայերը երբեք էլ այդ հողորում չեն ապրել, եւ որ այդ հողերը անհիշելի ժամանակներից պատկանել են Ադրբեջանի Հանրապետությանը: Հետեւաբար այնտեղ չի կարող լինել ոչ մի հայկական գերեզման կամ հուշարձան: Ադրբեջանը պնդում է, որ հուշարձանները ոչ թե հայկական են, այլ աղվանական: Հայկական մշակութային ժառանգության կեղծման փորձերից առանձնանում է մի տեսություն, որը հռչակում է Նախիջեւանի, Հյուսիսային Արցախի եւ ժամանակակից Ադրբեջանի այլեւայլ շրջաններում գտնվող խաչքարերը ոչ թե հայկական, այլ աղվանական հուշարձաններ են՝ տալով դրանց խաչդաշ անվանումը: Այս տեսությունը այսօր ընդունված է ադրբեջանական պաշտոնական քարոզչության մեջ: Այդ միտքը առաջ է բերել եւ հնարել ադրբեջանցի ճարտարապետ Դ. Ա. Ախունդովը իր «Հին եւ Վաղ միջնադարյան ադրբեջանական ճարտարապետությունը» գրքում (Բաքու, 1986): Ախունդովը փորձեր է արել Ջուղայի, Լեռնային Ղարաբաղի, Հյուսիսային Արցախի խաչքարերի մեջ գտնել միթրայականության եւ զրադաշտականության նշաններ, որոնք իբր թե առանձնացնում են աղվանական խաչդաշները խիստ քրիստոնեական խաչքարերից: Այսպես, ԺԶ-ԺԷ դդ. խաչքարերը նկարագրելիս, Ախունդովը տեսնում է առյուծի, ցուլի, ծրի պատկերներ եւ դրանք նույնացնում, դրանց մեջ տեսնում Միտրայի հնամենի ուղեկիցներից, չնայած մասնագետները ասում են, որ այդ երեք կենդանիներն, անկասկած, ավետարանիչներն են: Խաչքարերի վրա գրված հայկական գրերն անտեսվում էին:

Ադրբեջանի նախագահ Ի. Ալիեւը նույն հակագիտական կարծիքն է պաշտպանում, հերքելով անհերքելին: Այնինչ Ջուղայի խաչքարերը համամարդկային մշակույթի գանձարանի մնայուն եւ անկրկնելի գանձերից են, որ սերում են հայ ժողովրդի ստեղծած դարավոր արվեստի ակունքներից: